ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռուբիկ Հակոբյանի, Ջարուհի Փոստանջյանի և Թևան Պողոսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» (Պ-156-27.11.2012-ՊԻ-010) Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ:

Ներկայացված նախագծով նախատեսվում են դրույթներ, որոնց համաձայն սահմանադրական դատարանն իրավունք ունի դատավարության կողմերի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել իր կողմից կայացված որոշումը և եզրակացությունը՝ չփոփոխելով դատական ակտի բովանդակությունը և էությունը:

Գործող օրենքներով, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության

վարչական դատավարության օրենսգրքի 112-րդ և 117.14-րդ հոդվածների համաձայն դատական ակտերի պարզաբանման լիազորությունը վերապահված է միայն ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարաններին, իսկ Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի համար, որն ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանների համար բարձրագույն ատյան է, նման լիազորություն վերապահված չէ:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանին, ապա, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 61-րդ հոդվածի 2[1]-րդ մասի, սահմանադրական դատարանի որոշումները և եզրակացությունները պետք է համապատասխանեն իրավական որոշակիության սկզբունքի պահանջներին: Հետևաբար, սահմանադրական դատարանի որոշումները պետք է նաև ի սկզբանե զերծ լինեն այնպիսի ձևական սխալներից, որոնց մասին հիշատակվում է նախագծում: Այս պահանջը լիովին բավարար է, որպեսզի սահմանադրական դատարանն իր որոշումներում թույլ չտա ձևական սխալներ, որոնք կարող են առաջացնել պարզաբանման անհրաժեշտություն:

Անդրադառնալով սխալների ուղղման կանոնին՝ նշենք, որ այն ոչ այլ ինչ է, քան իրավական որոշակիության պահանջի մասնավոր դրսևորումներից մեկը, և այդ իմաստով նաև անհարկի կրկնութուն է: Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի կարգավիճակը՝ որպես սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին, հնարավոր վրիպակների արձանագրումը պետք է վերապահվի բացառապես այդ մարմնի իրավասությանը և որևէ կերպով չի կարող ստուգվել: «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նշված պահանջի ներքո նման վրիպակների կամ սխալների փաստումը սահմանադրական դատարանի կողմից կլինի բացարձակապես ոչ իրատեսական: Մինչդեռ առաջին և վերաքննիչ ատյանների

դատարանների համար, ի տարբերություն վճռաբեկ դատարանի, որի որոշումները նույնպես վերջնական են, նման սխալների ուղղումը տրամաբանական է:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հ. Թովմասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
<<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Սահմանադրական դատարանի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետի ենթակետերով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի բյուջետային բնագավառում
կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ ընդունվելու կամ չընդունվելու դեպքում, ՀՀ պետական բյուջեի մուտքերի և ելքերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է դատարանի ակտերի՝ որոշման և եզրակացության պարզաբանում:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա ազդեցություն չհայտնաբերվելու եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է դատական ակտի պարզաբանման, ինչպես նաև վրիպակները, գրասխալները և թվաբանական սխալներն ուղղելու հետ կապված հարաբերություններին* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում***:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-156-27.11.2012-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 1. «Սահմանադրական դատարանի մասին» 2006 թվականի հունիսի 1-ի ՀՕ-58-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 68.1-րդ հոդվածով.

«*Հոդված 68.1. Սահմանադրական դատարանի ակտերի՝ որոշման եւ եզրակացության պարզաբանումը: Վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղումը.*

Սահմանադրական դատարանն իրավունք ունի դատավարության կողմերի դիմումի հիման վրա կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել իր կողմից կայացրած դատական ակտերը՝ որոշումը եւ եզրակացությունը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալները՝ չփոփոխելով դատական ակտի բովանդակությունը եւ էությունը:

Դատական ակտի պարզաբանման համար կամ վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալներն ուղղելու մասին Սահմանադրական դատարանը կայացնում է որոշում»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Դատական աշխատանքային առօրյայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղման եւ դատական ակտի պարզաբանման վերաբերյալ դատարանների կողմից որոշում կայացնել: Դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղման եւ դատական ակտի պարզաբանման վերաբերյալ քաղաքացիական եւ վարչական գործերով արդարադատություն իրականացնող Հայաստանի Հանրապետության դատարանները, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության եւ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքերի համապատասխան հոդվածները, ինարավություն ունեն իրենց նախաձեռնությամբ եւ գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա որոշում կայացնել:

Օրինակ՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է.

Հոդված 143. Վճռի պարզաբանումը: Վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղումը

1. Վճիռ կայացրած դատարանն իրավունք ունի գործին մասնակցող անձանց դիմումով կամ իր նախաձեռնությամբ պարզաբանել վճիռը, ուղղել թույլ տրված վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալները՝ չփոփոխելով վճռի բովանդակությունը եւ էությունը:

2. Վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալներն ուղղելու մասին պահանջը կարող է ներկայացվել մինչեւ վճռի կատարումը:

3. Վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալներն ուղղելու մասին դատարանը կայացնում է որոշում:

4. Վճիռը պարզաբանելու կամ վրիպակները, գրասխալները եւ թվաբանական սխալներն ուղղելու մասին որոշումը կարող է բողոքարկվել:

- ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է.

Հոդված 112. Վարչական դատարանի դատական ակտերին ներկայացվող պահանջները

Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող եւ միջանկյալ դատական ակտերին ներկայացվող պահանջների, դրանք կայացնելու կարգի, դրանց կառուցվածքի եւ բովանդակության, գործն ըստ էության լուծող դատական ակտի հրապարակման, այն մասնակիցներին ուղարկելու, դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ վճռի կայացման, վճռի պարզաբանման նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

Հոդված 117. 14. Վերաքննիչ դատարանի որոշումը

4. Վերաքննիչ դատարանի դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղման, լրացուցիչ որոշման կայացման, որոշման պարզաբանման նկատմամբ տարածվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը:

Ինչպես տեսնում ենք վերը շարադրվածից քաղաքացիական եւ վարչական գործերով արդարադատություն իրականացնելիս դատական ակտում առկա վրիպակների, գրասխալների եւ թվաբանական սխալների ուղղման եւ դատական ակտի պարզաբանման խնդրի հարուցման դեպքում առկա է օրենքով ամրագրված լուծում, ինչը չենք կարող անել սահմանադրական արդարադատություն իրականացնելիս:

Վերը նշված նորմերի սահմանումը անհրաժեշտ է նաեւ սահմանադրական արդարադատություն իրականացնող դատարանի համար: Այսօր Սահմանադրական դատարանը հանդիսանալով սահմանադրական արդարադատության բարձրագույն մարմին, չունենալով օրենքով ամրագրված լիազորություն, զրկված է իր

նախաձեռնությամբ կամ գործին մասնակցող անձանց դիմումի հիման վրա որոշում կայացնել, պարզաբանել իր կողմից կայացված ակտերը՝ որոշումը կամ եզրակացությանը: Այս բացը լրացնելու համար անհրաժեշտ է Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքում կատարել առաջարկվող լրացումը: